

տրութիւն կերակրոց » ըսուածը (Ոսկ. Մտթ. Ա, 728. Ընդհ. 159. Լմբբ. Ատեն. 201. Ծրծ. Գ):



Ա. Ի ԲՆԷ ՊԻՂԾԵՐ

1. — Ծագումն: — Ուտելեաց խտրականութիւնն աւելի կամ նուազ չափով կար բոլոր ազգաց մէջ (Վիգ. Ա, 615): Այլուր ցուցած եմ՝ թէ հներէ ոմանց կարծեօք՝ դիւաց ներգործութիւնն էր որ կը պղծէր շատ նիւթեր (Երդ. 182-4): Այս մասին հետաքրքրական է Տաթեւացւոյն մէկ խօսքը, որ մեկնելով սեղանօրհնէից նպատակը, կ'ըսէ. «Ընդ կերակուր կամ ընդ ըմպելի՝ դեն որ թշնամի է մեր՝ բազում անգամ վնաս խառնէ». եւ թէ կ'օրհնեն՝ «զի փախիցեն դեւք եւ անվնաս կերիցուք» (Քրդ. ամբ. 348), մինչ դեռ Շնորհալին նախամարդոյն մեղօք անիծեալ երկրայնոց մաքրութեան համար կը համարի օրհնութիւնը (աստ, 348-9): Տաթեւացւոյն համոզումը սերտիւ կապուած է դիւաց տարապայման տիրապե-